

ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՌՆԱՐԱՆԻՆ

Բացում եք սառնարանի դուռը և հանկարծ նկատում տհաճ մի երևույթ՝ անհաշտացել է զորոշացուցիչի վրայի ձևն «մուշտակը», իսկ տակամանը լի է ջրով։ Սառնարանն «չլիս սառնարան չէ։ Ի՞նչ անել։ Ինչպե՞ս ստիպել, որ նա նորից նորմալ աշխատի։

Ամենից առաջ պետք է ստուգել՝ սարքի՞ն են արդյոք էլեկտրալարերը։ Եթե սառնարանի դուռը բացել և նրա ներսի լամպը վառվի (այդպիսի լամպ կա կոմպրեսիոն տիպի բոլոր սառնարաններում, բացի «Սարատով—2»-ից), դա նշանակում է սարքին են շնորհը և նրա միացման պարագաները։ Իսկ եթե լամպը չ'լառվի, ապա նախ պետք է ստուգել շտեպսելը։ Դրա համար բավական է նրան միացնել սեղանի լամպի կամ ցանկացած էլեկտրասարքի շնորհի եղանակը։ Համոզվելով, որ շտեպսելը սարքին է, ստուգեք միացման շնորհը. քանզեք եղանակը և հերթով ձգեցեք շնորհի լարերը։ Այդպիսով հնչումը լամպի հայտնաբերվում է խզված ծայրը։ Շնորհի նորոգումը հնչող գործ է։ Միայն թե շմոռանք նորոգած տեղը խնամքով փաթաթենք մեկուսիչ ժապավենով։

Հնարավոր է և այսպես, սառնարանն աշխատում է, սակայն ընդհատումներով։ Այդ դեպքում ամենից առաջ ստուգեք ցանցի լարումը։ Խնտ ցածր լարման դեպքում ունեն սկսում է դոռալ, իսկ շարժիչի միացման և անջատման միջև ինտերվալները դառնում են կարճատև։ Այդ դեպքում սառնարանի-աշխատանքը կարելի է կարգավորել միայն մի ճանապարհով՝ ցանցին ռարժրացնող տրանսֆորմատոր միացնելու միջոցով։

Համոզվելով, որ հաղորդալարերը սարքին են, իսկ ցանցի լարումն էլ նորմալ է, մի քանի անգամ միացրեք և անջատեք ջերմակարգավորիչը։ Նրա միացման ժամանակ կոնտակտները միանալով առաջացնում են շրխկոց հիշեցնող ձայն։ Եթե շրխկոց չի լսվում, ուրեմն սառնարանը չի միացել։ Դա նշանակում է, որ ջերմակարգավորիչը անսարք է, և այն պետք է փոխարինել նորով։

Իսկ ինչպե՞ս անել այդ։


Փոխարինելու սկզբունքը նույնն է բոլոր մար-

կաների համար։ Օրինակ, «ԶԻԼ—ԿԽ—240» սառնարանի համար պետք է պտտակալիչով թուլացնել զոլորշացուցիչի ձախ կողմի երկու պտտակալները և անջատել ջերմակարգավորիչի խողովակը։ Թեթևակի դեպի ձեզ քաշելով թռնակը, հանեք այն։ Պտտեք ջերմակարգավորիչի վահանիկը վերևի շեկորատիվ ձողին ամրացնող երկու պտտակալները և հանեք վահանիկը։ Պտտելով ջերմակարգավորիչը ներքին ձողին ամրացնող երկու պտտակալները, ջերմակարգավորիչը դուրս քաշեք դեպի ձեզ և սեղմակներից անջատեք երկու հաղորդալարերը։ Դրանից հետո սառնարանային խցիկի ետևի անցքով զգուշորեն դեպի ձեզ դուրս քաշեք ջերմակարգավորիչի խողովակը։

Ձախ ձեռքով վերցրեք նոր ջերմակարգավորիչը, իսկ աջով զգուշորեն ուղղեք նրա խողովակը։ Պտտակալիչով բարձրացրեք սառնարանային խցիկի այն մասի ջերմամեկուսացումը, որտեղ գտնվում են խողովակի անցքերը, և խողովակը մտցրեք այդ անցքերի մեջ։

Ջերմակարգավորիչը պետք է տեղադրել այնպես, որ էլեկտրահաղորդալարերի միացման սեղմակները գտնվեն ձախ կողմում։ Հաղորդալարերը միացրեք սեղմակներին, ջերմակարգավորիչը դրեք բնի մեջ և երկու պտտակալներով այն ամրացրեք ձողին՝ ջերմակարգավորիչի կալունակի վրա գտնվող երկու եզրային անցքերի միջով։ Տեղադրեք և ամրացրեք (երկու պտտակալներով) ջերմակարգավորիչի վահանիկը և իր տեղը դրեք թռնակը։ Դրանից հետո զոլորշացուցիչի պատերի վրայով ոլորեք ջերմակարգավորիչի խողովակը, նրա ծայրը մտցրեք տեքստոլիտային միջադիրի և խողովակի ամրացման ճարմանդի միջև ու ամրացրեք երկու պտտակալներով։

Եթե սառնարանի զոլորշացուցիչը արագորեն



սառցակալում է, իսկ սառնարանը հաճախ է միանում, ապա ամենից առաջ ստուգեցեք պահարանի հերմետիկությունը: Դռան և պահարանի միջև բացակա չլսե՞ք է լինի, որովհետև երա միջով սենյակի տաք օդը կարող է թափանցել սառնարանի մեջ: Նվն խախտվել է դուռը, հերմետիկությունը վերականգնելու համար, որպես կանոն, բավական է ձգել ձխնիների պտուտակներ:

Իրենց կանխարկիցիայով և ցրտաքայան ստացման եղանակներով սառնարանները բաժանվում են արտորցիկներին («Գազապարատ», «Անեո», «Ռեստով-Դոն», «Լենինգրադ», «Ուլրաինա», «Կալկազ», «Ուրալեց», «Օրենբուրգ», «Կուրբաս») և կոմպրեսիոնների («Ջիլ-Մոսկվա», «Սարատով», «Օկա», «Դենպր», «Բախու», «Միր», «Օրսկ», «Մինսկ», «Յուրյուզան»):

Սխեմայում ցույց է տրված կոմպրեսիոն սառնարանային ագրեգատի գործողության բազրրունը: Այն իրենից ներկայացնում է ֆրեոնով լցված պարփակ հերմետիկ սխեմա: Այդ սխեման բաղկացած է մխոցային կոմպրեսորից, կոնդենսատորից, գոլորշացուցիչից և խողովակաշարից:


Փոփոխական նոսանքի միաֆազ էլեկտրաշարժիչը կոմպրեսորի հետ գտնվում են ընդհանուր հերմետիկ պատյանի մեջ: Կոնդենսատորը խողովակաշարով արտամղիչ խողովակի միջոցով միացված է կոմպրեսորի հետ, իսկ ֆիլտրի և մագնորի միջոցով՝ գոլորշացուցիչի հետ: Ներծող խողովակը գոլորշացուցիչը միացնում է կոմպրեսորի պատյանի ներքին խողովի հետ:

Ջերմակարգավորիչի բռնակը պտտելով ժամացույցի սլաքի ուղղությամբ, ղուր միացնում եք կոնտակտները և դառնով միացնում սառնարանային ագրեգատի շարժիչը: Նա շարժման մեջ է դնում կոմպրեսորը, որը ներծծում է ֆրեոնի գոլորշիները, սեղմում է դրանց և խողովակով արտամղում կոնդենսատորի մեջ: Այնտեղ գազի գոլորշիները վեր են ածվում էներգիա ֆրեոնի և ֆիլտրի ու մագնորի միջոցով անցնում են գոլորշացուցիչի մեջ: Մագնորի մեջ ստեղծված ներման անկման հետևանքով գոլորշացուցիչի մեջ ննչումը ավելի ցածր է, քան կոնդենսատորի մեջ. գոլորշացուցիչի մեջ անցնող ֆրեոնը գոլորշիանում է: Գոլորշացուցիչից ներծծող խողովակի միջոցով գոլորշիները անցնում են կոմպրեսորի պատյանի մեջ, և աշխատանքի ցիկը կրկնվում է:

Գոլորշացուցիչում անհրաժեշտ ջերմաստիճանին հասնելու դեպքում ջերմակարգավորիչի ան-

րը: Միջադիրները դնելով ձխնիների և փականքի շխանի (շաշեղա) տակ, ձգելով կամ թուլացնելով ռետինե ամրացնող պտուտակները, այդ բացակը կարգավորեք այնպես, որպեսզի դուռը փակ լինելու դեպքում բացակով շանցնի հաստ թղթի կտորը: Նվն շնաջողվի այդպիսի կարգավորումը՝ բացակը մեա թուլատրելիից ավելի մեծ.

լն անջատում է շարժիչը: Որոշ ժամանակ անց սառնարանային խուցից ջերմություն կլանելու հաշվին գոլորշացուցիչի ջերմաստիճանը սկսում է բարձրանալ: Եր այն հասնում է որոշ ջերմաստիճանի՝ ավելի բարձր, քան անհրաժեշտ



է, ջերմակարգավորիչի կոնտակտները միանալով նորից միացնում են շարժիչը. ֆրեոնը նորից անցնում է գոլորշացուցիչի մեջ, և գոլորշացուցիչի ջերմաստիճանը նորից իջնում է:

Այսպիսով, սառնարանի աշխատանքը կարգավորվում է ավտոմատորեն՝ ջերմակարգավորիչի օգնությամբ, որի բռնակից ղուր օգտվում եք, երբ որոշում եք անհրաժեշտ ռեժիմը:

ապա պետք է ամբողջովին փոխել սառնարանի
դռան վրայի ռետինը:


Սառնարանային ադրեզատի աշխատանքի ժա-
մանակ աղմուկն ու թխկոցը կարող է առաջ գալ
խողովակները պահարանի իրանին, կոմպրեսորի
պատյանին կամ ադրեզատի կոնդենսատորին
դիպելուց: Խողովակը զգուշորեն հեռացրեք շրի-
ման տեղից և աղմուկը կվերանա:

Սառնարանային ադրեզատի կոմպրեսորի
պատյանն ունի զսպանակավոր կախույց: Այդ կա-
խուցը նույնպես կարող է աղմուկ առաջացնել:
Այն կարելի է վերացնել կարգավորելով կախո-
ցի բոլտերը՝ զգուշորեն ներպտուտակելով կամ
թուլացնելով դրանք:

Երբեմն սառնարանի ջերմակարգավորիչի բրո-
նակը զտնվում է «նորմ.» դիրքում, իսկ սառնա-
րանը նորմալ չի աշխատում: Ինչո՞ւմն է բանը:

Դուք արդեն համոզվել եք, որ պահարանի հեր-
մետիկությունը վատ չէ, իսկ սառնարանը տա-
լիս է շափից ավելի սառնություն: Այդ դեպքում
պետք է թուլացնել սխիֆոնին սեղմող զսպանա-
կը: (Այդ զսպանակի լարմանը համապատասխան
սխիֆոնում առաջանում է գոլորշիների ճնշում,
որն անհրաժեշտ է էլեկտրաշարժիչի գործարկիչ
ոնչևն միացնելու համար): Իսկ եթե ջերմակար-
գավորիչի բռնակի «նորմ.» դիրքի դեպքում տե-
ղի է ունենում հալում, ապա պետք է սեղմել
զսպանակը: Դա կատարվում է այսպես:

Հասնեք ջերմակարգավորիչի բռնակը և 2 մմ
լայնության ծայր ունեցող երկար պտուտակիչը
մացրեք ջերմակարգավորիչի առանցքի անցքի
մեջ, և ծայրը դրեք կարգավորիչ պտուտակի շը-



լիցի մեջ: Եթե սառնարանը քիչ սառնություն է
տալիս, պտուտակը 1/4-ով պետք է շրջել ժա-
մացույցի սլաքի հակառակ ուղղությամբ: Դրա-
նից հետո ստուգեք սառնարանի աշխատանքը, և,
եթե կարգավորումը բավարար չէ, պտուտակը
դարձրեք ևս 1/4-ով: Այդպես պետք է կարգա-
վորել այնքան, մինչև հասնեք անհրաժեշտ ար-
դյունքի: Իսկ եթե սառնարանը շատ սառնություն
է տալիս, և մթերքները սառնցնում է նույնիսկ
պահարանի ներքևի մասում, ապա պտուտակը
պետք է պտտել ժամացույցի սլաքի ողղությամբ:

Սակայն լինում է և այնպես, որ ջերմակար-
գավորիչից սկսում է հոսել ֆրոնոնը կամ էլ այն
արդեն բոլորովին դուրս է եկել ջերմակարգավո-
րիչի խողովակից, և այդ պատճառով էլ կոն-
տակտներն անջատված են լինում: Այդ դեպքում
ջերմակարգավորիչը ոչ մի կերպ չի կարգավոր-
վում. այն պետք է փոխարինել նորով:

ԱՐՏԱՍՈՎՈՐ ՄՐՅՈՒԹՅՈՒՆ

Մեր նախորդ համարում տպագրված «Մարդկային ուղեղի ու կորդոններ»
հոդվածում հրաշք-հաշվիչների շարքում նշվում էր նաև Մուրիս Դագբերի անու-
նը: Վերջերս կիլում (Ֆրանսիա) հետաքննիչ մեցուքյուն է անցկացվել Մ. Դագ-
բերի և ժամանակակից էլեկտրոնային-հաշվիչ մեքենայի միջև, որը վայրկյա-
նում կատարում է մեկ միլիոն գործողություն: Դագբերը նախօրոք հայտարարել
է, որ իրեն պարտված կհանաչի այն դեպքում միայն, եթե մեքենան 7 խնդիր
ավելի շուտ լուծի, քան ինքը՝ 10-ը:

Մ. Դագբերը բոլոր 10 խնդիրները լուծել է 3 րոպե 43 վայրկյանում, իսկ
էլեկտրոնային մեքենան դրանից 7-ը՝ 5 րոպե 18 վայրկյանում: